

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՈՒՆԻՍ 2025



ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-111-Ն, ընդունված՝ 14.05.2025թ., ուժի մեջ՝ 01.08.2025թ.) որոշ բացառություններով)

- Առաջնորդվելով շուկայի ազատականացման և մրցակցության խթանման նպատակներով՝ սահմանվել է, որ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից օգտվող՝ բնական ջրահոսի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններում, արևային և հողմային կայաններում էլեկտրաէներգիա արտադրողները առաջիկա երկու տարիների ընթացքում կարող են հրաժարվել էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից և մուտք գործել մրցակցային շուկա՝ առանց այդ երաշխիքի վերականգնման իրավունքի:
- Սա տարբերվում է նախորդ կարգավորման բովանդակությունից, որով գնման երաշխիքից օգտվող արտադրողները 15-20 տարի չէին կարող այդ երաշխիքից հրաժարվել և պարտավոր էին էլեկտրաէներգիան վաճառել պետությանը ՀԾԿՀ-ի կողմից սահմանված սակագնով:
- Սահմանվել են նաև փոփոխություններ՝ կապված որակավորված սպառողի կարգավիճակի հետ:

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին (ՀՕ-118-Ն, ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 14.06.2025թ.)

- Հարցումների ուղարկումն էլեկտրոնային եղանակով կազմակերպելու համար հստակեցվել են փոխգործակցության մեխանիզմները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-113-Ն, ընդունված՝ 14.05.2025թ., ուժի մեջ՝ 02.07.2025թ.)

- Եթե քրեական գործ չի հարուցվում, դադարեցվում է, կարճվում է կամ արդարացման դատավճիռ է կայացվում, բայց իրավախախտումը ներառում է վարչական իրավախախտման հատկանիշներ, ապա իրավախախտման համար հետապնդող կարող է վարչական տուգանք նշանակվել. ա) մեկ ամսվա ընթացքում, երբ գործի քննության համար լիազորված մարմինը ստանում է համապատասխան որոշումը կամ դատավճիռը, բ) կամ առավելագույնը վեց ամսվա ընթացքում՝ համապատասխան որոշումը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելուց կամ քրեական վարույթ չնախաձեռնելուց հետո:
- Փոփոխություններ են կատարվել նաև տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշի օգտագործման կանոնները խախտելու և ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դրույթներում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին (ՀՕ-119-Ն, ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 14.06.2025թ.)

- Համաձայնագրի վավերացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 1.1 կետից. մասնավորապես՝ «Կառավարությունը նպաստելու է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություններ կայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, ներառյալ հակամարտության գոտիներում բնակվող հայերի անվտանգության ապահովմանը»:
- Համաձայնագրի վավերացման արդյունքում նախատեսվել է ունենալ առավել զարգացած միգրացիոն համակարգ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-112-Ն, ընդունված՝ 14.05.2025թ., ուժի մեջ՝ 12.06.2025թ., տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո արտադրված կամ ներմուծված ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վրա)

- Հաշվի առնելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 47.16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով կարգավորվում են միայն ՀՀ կառավարության սահմանած անվտանգության տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների հետ կապված իրավակարգավորումները, իսկ ՀՀ-ն՝ որպես Եվրասիական տնտեսական միության անդամ-պետություն, առաջնորդվում է ԵԱՏՄ սահմանված կարգավորումներով, փոփոխություն է կատարվել՝ սահմանելով ԵԱՏՄ պահանջներին չհամապատասխանող արտադրանքի համար վարչական պատասխանատվություն:
- Հաշվի առնելով այն, որ գործող իրավակարգավորումներով տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների արտադրության և ներմուծման համար նախատեսված տուգանքի չափը փոքր է, իրավախախտում թույլ տված անձը ուղղակի վճարում է տվյալ իրավախախտման համար սահմանված տուգանքը՝ միևնույն ժամանակ չդադարեցնելով իր ոչ իրավաչափ վարքագիծը, վերանայվել են տուգանքի դրույքաչափերը:

Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1 ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին (ՀՕ-120-Ն, ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 14.06.2025թ.)

- 236 միլիոն եվրո գումարի չափով միջոցներն ուղղվելու են ՀՀ Սյունիքի մարզում Սիսիանի և Քաջարանի միջև նոր 60 կմ երկարությամբ մեկ երթևեկելի մասի ճանապարհային հանգույցի կառուցման ընդհանուր ծրագրի մի մասի ֆինանսավորմանը:
- Ծրագիրը կիրականացվի երեք ենթահատվածներով՝
 1. Հյուսիսային ենթահատված՝ 27.1 կմ,
 2. Բարգուշատի թունել՝ 8.6 կմ,
 3. Հարավային ենթահատված՝ 24.25 կմ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-114-Ն), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-115-Ն), «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՕ-116-Ն), ՀՀ Հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-117-Ն) (ընդունված՝ 12.05.2025թ., ուժի մեջ՝ 12.06.2025թ.)

- Ուժի մեջ են մտել փոխարկելի փոխառությունը սահմանող կարգավորումները:
- Փոխառության պայմանագրով, որի համաձայն փոխառու է հանդիսանում բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, կարող է նախատեսվել, որ փոխառության գումարի կամ դրա մասի վերադարձի և (կամ) տոկոսների կամ դրանց մի մասի վճարման պարտավորության փոխարեն փոխառուն պարտավոր է փոխատուի օգտին տեղաբաշխել պայմանագրով սահմանված կարգով որոշված քանակի, տեսակի և դասի բաժնետոմսեր կամ տրամադրել բաժնեմաս:
- Փոխարկման հնարավորությունը սահմանվում է պայմանագրի կնքման պահին:
- Բաժնետիրական ընկերությունների կողմից կնքվող փոխարկելի փոխառության պայմանագրի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ:
- Սահմանվել է ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգը:
- Եթե անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա վճարման ենթակա տոկոսները բաժնետոմսի կամ բաժնեմասի փոխարկվում են մինչև տոկոսների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների լրանալը, ապա տոկոսները համարվում են վճարված փոխարկման պահին, իսկ եթե փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա վճարման ենթակա տոկոսները բաժնետոմսի կամ բաժնեմասի փոխարկվում են տոկոսների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսներից հետո, ապա տոկոսները համարվում են վճարված մինչև տոկոսների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների լրանալը:

**Հայաստանի Հանրապետության և
Եվրոպական ներդրումային բանկի միջև
«Երևանի էներգաարդյունավետության
երկրորդ ծրագիր» ներդրումային
դրամաշնորհային համաձայնագիրը
վավերացնելու մասին (ՀՕ-121-Ն, ընդունված՝
29.05.2025թ., ուժի մեջ՝ 14.06.2025թ.)**

- Ծրագրի իրականացման նպատակն է Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրային շենքերում՝ մանկապարտեզներում և պոլիկլինիկաներում, իրականացնել էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:
- Հանրային շենքերի հիմնանորոգումը, սեյսմիկ ամրացումն ու վերակառուցումը պետական և համայնքային մակարդակում հանդիսանում են առաջնահերթություն, որով պայմանավորված՝ ներդրումային դրամաշնորհային համաձայնագրի վավերացումը հանդիսանում է «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ծրագրի կյանքի կոչման կարևոր բաղադրիչ:

**«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին»
օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-123-
Ն), «Տեղական ինքնակառավարման մասին»
օրենքում լրացում կատարելու մասին (ՀՕ-124-
Ն), «Երևան քաղաքում տեղական
ինքնակառավարման մասին» օրենքում
լրացում կատարելու մասին (ՀՕ-125-Ն)
(ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝
23.06.2025թ.)**

- «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում ավելացվել է լիազորող նորմ, որի հիմքով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով կարող է սահմանվել մանկապատանեկան մարզադպրոցների անվանակոչության կարգ:
- Կարևորելով վաստակաշատ անձանց և սպորտում ավանդ ունեցող անձանց, այդ թվում՝ օլիմպիական խաղերի և աշխարհի չեմպիոնների մեծ ներդրումը սպորտի զարգացման, մարզիկների կրթության և հայրենասիրական դաստիարակության գործում՝ մարզադպրոցների անվանակոչումը կհանդիսանա նրանց աշխատանքի յուրատեսակ գնահատականը:

**«Պետական տուրքի մասին» օրենքում
փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-122-Ն,
ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝
14.06.2025թ.)**

- ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի)՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար պետական տուրքի չափը սահմանվել է բազային տուրքի 800-ապատիկի չափով՝ նախկին 200-ապատիկի փոխարեն՝ ապահովելու համար հավասար մրցակցային պայմաններ ներմուծվող և տեղական ցեմենտի դեպքում:

**«Կատարողական վարույթի մասին» օրենքում
(ՀՕ-126-Ն) և մի շարք այլ օրենքներում
փոփոխություններ կատարելու մասին
(ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝
14.06.2025թ.)**

- Փոփոխությունների անհրաժեշտությունը բխում է կատարողական վարույթների թվի աննախադեպ աճից, որի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել թվայնացնելու օրենքից բխող գործընթացները:
- Հաշվի առնելով, որ գործընթացը հնարավոր չի լինելու պատշաճ կերպով ապահովել 2025 թվականի ընթացքում, առաջարկվել է օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել ոչ թե 01.07.2025թ.-ը, այլ՝ 01.01.2026թ.-ը, իսկ դատարանների հետ կապուղիների ներդրման և համակցման ժամկետները սահմանել 01.03.2026թ.-ը՝ նախկին 01.09.2025թ.-ի փոխարեն:
- Ակնկալվում է, որ նշված փոփոխությամբ հնարավոր կլինի էլեկտրոնային համակարգը նախապատրաստել օրենսդրական կարգավորումներով սահմանված պահանջներին և ապահովել պատշաճ ներդրումը, մասնավորապես՝ համապատասխան սպասարկման ընկերության հետ կնքել պայմանագիր, գործող համակարգում կատարել անհրաժեշտ փոփոխություններ, համակարգը համակցել այլ մարմինների հետ, շրջանառել և ընդունել օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի փաթեթը, ինչպես նաև վերապատրաստել հարկադիր կատարողներին:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին և «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-156-Ն, ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 25.06.2025թ.)

- Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝
 1. ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 31.12.2027-ը ներառյալ ցուցակված բաժնետոմսերի մասով 01.03.2020-ից մինչև 31.12.2027-ը ներառյալ ստացված շահաբաժինների մասով,
 2. ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 31.12.2027-ը ներառյալ ցուցակված բաժնետոմսերի՝ մինչև 31.12.2027-ը ներառյալ օտարումից, մինչև 31.12.2027-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչև 31.12.2027-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով,
 3. ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում 01.01.2025-ից մինչև 31.12.2027-ը ներառյալ ցուցակված պարտատոմսերի՝ մինչև 31.12.2027-ը ներառյալ օտարումից, մինչև 31.12.2027-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչև 31.12.2027-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով, և այլն:
- Արժեթղթերից ստացվող եկամուտների մասով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվելու ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 31.12.2027-ը ներառյալ ցուցակված բաժնետոմսերի մասով 01.03.2020-ից մինչև 31.12.2027-ը ներառյալ ստացված շահաբաժինները, ինչպես նաև ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 31.12.2024-ը ներառյալ ցուցակված պարտատոմսերից մինչև այդ պարտատոմսերի մարումն ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց, և ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում 01.01.2025-ից մինչև 31.12.2027-ը ներառյալ ցուցակված պարտատոմսերից մինչև 31.12.2027-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-157-Ն), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին (ՀՕ-158-Ն) (ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 25.07.2025թ.)

- Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում որպես այլընտրանքային խափանման միջոց տնային կալանքի առկայության պայմաններում աշխատողի կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ կարգավորումների բացակայությամբ:
- Փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ անձը կարող է դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքից կատարել իր աշխատանքային պարտականությունները, եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս այն կատարել նաև հեռավար եղանակով: Հակառակ դեպքում աշխատանքային հարաբերությունները կասեցվում են՝ կալանքի նմանությամբ:

«Կրիպտոակտիվների մասին» օրենք (ՀՕ-159-Ն), մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 04.07.2025թ.՝ որոշ բացառություններով)

- Կրիպտոակտիվների ոլորտի ակտիվության հետ միաժամանակ առաջացել են հաճախորդների շահերի պաշտպանության բավարար մեխանիզմների բացակայության և կրիպտոակտիվների ու դրանց հիմքում ընկած տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) նպատակով կիրառելու հետ կապված վտանգներ և ֆինանսական կայունության ռիսկեր, որոնք հնարավորինս չեզոքացվել են օրենսդրության այս փոփոխություններով:
- Օրենքի ընդունված վերջնական տարբերակով բանկերին արգելվել է բանկային ծառայությունների հետ համատեղել կրիպտոակտիվներով ծառայությունների իրականացումը, բացառությամբ էլեկտրոնային փողի թոքենի թողարկման՝ հաշվի առնելով, որ գործող օրենսդրությամբ բանկերին թույլատրված է թողարկել էլեկտրոնային փող:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանելու մասին» (N 718-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 16.06.2025թ.)

- Որոշմամբ սահմանվել են՝
 1. օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների փոխանցման կարգը,
 2. հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ստացման կարգը,
 3. փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները:
- Նախատեսվել է, որ ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկության ներկայացումից և վավերացումից հետո հարկային մարմնի կողմից կազմվում են տվյալների պանակներ յուրաքանչյուր մասնակից պետության համար, որոնք ներառում են միայն տվյալ Հաշվետու պետության հաշվետու հաշիվները:
- Հարկային մարմինը մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվա սեպտեմբերի 30-ը Հաշվետու պետություններին Համակարգի միջոցով փոխանցում է գաղտնագրված պանակները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N98-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 739-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 10.06.2025թ.)

- «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշման մեջ կատարվել են խմբագրական բնույթի փոփոխություններ:
- Նախատեսված օժանդակությունը տրամադրվելու է 2025թ. փետրվարի 1-ից կատարված արտահանումների համար (նախկին խմբագրությամբ որոշման մեջ տեխնիկական վրիպակի արդյունքում ժամկետը նշվել էր 2025թ. հունվարի 1-ից):

«Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» (N 806-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 04.07.2025թ., գործում է մինչև՝ 04.01.2026թ.)

- Կառավարության N1848-Ն որոշմամբ սահմանվել էր արտահանման ժամանակավոր արգելք՝ (6 ամիս) ՀՀ տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների վրա, որի գործողությունը ավարտվում է 2025 թվականի հուլիսի 3-ին:
- Արտահանման արգելքը երկարաձգվել է ևս 6 ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի հունվարի 4-ը ներառյալ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1343-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 713-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 06.06.2025թ.)

- «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման միջոցառման իրականացման անհրաժեշտ բազային պահանջները, օժանդակության տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» N1343-Ն որոշման փոփոխությունների ընդունումը պայմանավորված է ներդրումային ծրագրի շրջանակներում ընկերություններին անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիության համար առավել բարենպաստ դաշտի ու պայմանների ստեղծմամբ, ենթակառուցվածքների կառուցման պայմանները դյուրինացնելու, այդ թվում՝ ներդրումային ծրագրի ավարտը և կառուցված ենթակառուցվածքի ծախսը հավաստող աուդիտորական հաշվետվություն կատարելու նախընտրելի աուդիտորական ընկերությունների սահմանափակման վերացումը:

«Արտադրանքի սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկումների վճարների փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» (N 735-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 07.06.2025թ., գործում է մինչև՝ 10.11.2027թ.)

- Արտադրանքի սերտիֆիկացման կամ փորձարկման աջակցության տրամադրման առումով սահմանվել է մասնակի փոխհատուցում ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված համապատասխանության գնահատման ծախսերի համար, որոնք իրականացնում են Էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N874-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» «A (Է3) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» բաժնի 01.1 (Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում), 01.2 (Բազմամյա մշակաբույսերի աճեցում), 01.3 (Տնկիների և այլ տնկանյութերի աճեցում), 01.4 (Անասնաբուծություն) և 03.2 (Ձկնաբուծություն) խմբերում, «C (ՄԻ) Մշակող արդյունաբերություն» բաժնում (բացառությամբ՝ 18 «Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում», 33 «Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» հատվածների) ներառված գործունեության տեսակներից որևէ մեկը:
- Ծրագրով նախատեսվում է փոխհատուցել շահառուի՝
 - սերտիֆիկատի տրամադրման համար կատարված ծախսը՝ սերտիֆիկատի տրամադրման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 100.000 դրամը,
 - մեկ տեսակի արտադրանքի լաբորատոր փորձարկման համար կատարված ծախսը՝ յուրաքանչյուր ցուցանիշի համար արժեքի 50 %-ը, բայց ոչ ավելի, քան 50.000 դրամը:
- Շահառուն իր ընտրությամբ կարող է դիմել միաժամանակ սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկման, ինչպես նաև միայն սերտիֆիկացման կամ միայն լաբորատոր փորձարկման ծախսի փոխհատուցման համար:
- Ընդ որում, մեկ շահառուի համար ծրագրի շահառու դիտարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում արտահանված արտադրանքի համար տրամադրվող աջակցությունը չի կարող գերազանցել 5.000.000 դրամը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 7-ի N 1755-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» (N 737-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 07.06.2025թ., գործում է մինչև՝ 10.11.2027թ.)

- Սահմանվել է մասնակի փոխհատուցում ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված համապատասխանության գնահատման ծառայության ծախսերի համար, որոնք իրականացնում են Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» «A (Է3) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» բաժնի 01.1 (Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում), 01.2 (Բազմամյա մշակաբույսերի աճեցում), 01.3 (Տնկիների և այլ տնկանյութերի աճեցում), 01.4 (Անասնաբուծություն) և 03.2 (Ձկնաբուծություն) խմբերում, «C (ՄԻ) Մշակող արդյունաբերություն» բաժնում (բացառությամբ՝ 18 «Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում», 33 «Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» հատվածների) դասերում ներառված գործունեության տեսակներից որևէ մեկը:
- Ծրագրով նախատեսվում է մասնակի փոխհատուցել շահառուի կողմից սերտիֆիկացման համար կատարված ծախսը, որը չի ներառում տրամադրված սերտիֆիկատի յուրաքանչյուր տարվա համապատասխանության հսկողության համար իրականացվող ծախսը:
- Սերտիֆիկացման ծախսերը մասնակի փոխհատուցվում են հետևյալ չափերով՝
 - ISO 9001 և ISO 14001 սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1.000.000 դրամը,
 - ISO 22000 և FSSC 22000 սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1.500.000 դրամը,
 - «Global G.A.P.», «Հալալ», «օրգանական» և «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1.500.000 դրամը,
 - Ծրագրով նախատեսված մյուս սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1.500.000 դրամը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N1332-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (N 740-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 01.09.2025թ.)

- Կառավարության 03.08.2023թ. «Ջրօգտագործման թույլտվության (ՋԹ) տրամադրման, դրա ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, վերանայման, կասեցման, ուժը կորցրած ճանաչելու, դադարեցման կարգերը և ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը, հորատանցքի անձնագրերի, հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» N1332-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ՝
 - 1.ՋԹ տրամադրման, երկարաձգման, վերաձևակերպման, վերանայման դեպքերում հանվել է ջրօգտագործողի կողմից ջրօգտագործման թույլտվությունը ստորագրելու պահանջը,
 - 2.ՋԹ օրինակելի ձևաթղթի տիտղոսաթերթից հանվել է ջրօգտագործողի կողմից ջրօգտագործման թույլտվությունը վավերացնելու պահանջը, ՋԹ-ն էլեկտրոնային եղանակով տրամադրելու համար նախատեսվել է QR հատուկ ծածկագիր,
 - 3.ՋԹ ստացման հայտը ներկայացվել է նոր խմբագրությամբ՝ լրացվել է նոր կետով, համաձայն որի՝ կներկայացվի նաև ջրօգտագործման և ջրահեռացման, թույլատրելի սահմանային արտահոսքի նորմերի հաշվարկ իրականացնող ընկերության անվանումը:
- հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկում ևս կատարվել են փոփոխություններ:

«Մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) ձևը և դրա տրման կարգը հաստատելու մասին» (N 712-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Առանձնացվում են արտահանում և ժամանակավոր արտահանում ընթացակարգերը, սահմանվում է մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգը:
- Եզրակացությունը (թույլատրող փաստաթուղթը) տրամադրվելու է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ համապատասխան դասակարգվող յուրաքանչյուր այն մշակութային արժեքի համար, որի համար կիրառվում է արտահանման սահմանափակում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N569-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 732-Լ, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 07.06.2025թ.)

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N1176-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N569-Լ որոշմամբ սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագրի իրականացման ընթացքից ելնելով՝ հստակեցվել և լրամշակվել էին դիմումի մերժման հիմքերը, ինչպես նաև սպանդանոցային մորթի ծավալների ընդլայնման խթանման առումով սահմանվել էր նոր՝ սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիր:
- Այս որոշմամբ ծրագրի մեկնարկի համար սահմանված՝ 01.07.2025թ. ժամկետը փոխարինվել է 06.06.2025թ. -ով և հանվել են կենդանին սպանդանոց տեղափոխող անձի կողմից սպանդի ենթարկված կենդանու մսեղիքը և ենթամթերքը կենդանու սեփականատիրոջը հանձնելու մասին պահանջը:

«Մշակութային արժեքների վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգը հաստատելու մասին» (N 734-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Մշակութային արժեքների վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգի իրավական դաշտը կարգավորված չէ:
- Որոշմամբ կարգավորվել է պետական սեփականություն համարվող՝ պետական կամ այլ պահոցներում մշտապես պահպանվող, պետական սեփականություն չհամարվող՝ պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա մշակութային արժեքների, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանական ցուցակում չգրանցված կամ գրանցման ոչ ենթակա մշակութային արժեքների վերամշակման նպատակով արտահանումը:
- Լիազոր մարմնի կողմից հսկողություն է իրականացվելու վերամշակման նպատակով մշակութային արժեքի արտահանման և վերամշակված առարկայի վերադարձի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N1266-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» (N 721-Ն, ընդունված՝ 05.06.2025թ., ուժի մեջ՝ 07.06.2025թ.)

- «Այն երկրների ցանկը հաստատելու մասին, որոնց թունաբանահիգիենիկ գնահատման փորձարկման արդյունքներն ընդունելի են Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար» N1266-Ն որոշմամբ հաստատված երկրների ցանկի վերանայման ու լրաշակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ վերանայված ցանկում ներառվել են հիմնականում Եվրոպական միության երկրները, ԵԱՏՄ երկրները, ինչպես նաև Ճապոնիան, Կանադան, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան, Իսլանդիան, Իսրայելի Պետությունը և ԱՄՆ-ն:
- Հաշվի առնելով նշված պետություններում թունաքիմիկատների արտադրության, շրջանառության, թունաբանահիգիենիկ փորձարկումների և օգտագործման ոլորտներում ներդրված վերահսկողության խիստ պահանջները՝ հաստատվել է, որ նշված երկրներում առկա գերհագեցած լաբորատորիաներում և գիտահետազոտական կենտրոններում իրականացված թունաբանահիգիենիկ փորձարկումների արդյունքները վստահություն են ներշնչում և կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրությամբ սահմանված կարգով պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար:

«Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը, լիցենզիաների ձևերը սահմանելու մասին» (N 855-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով օպերատոր սահմանելու օրվանից հետո՝ վեցերորդ ամիսը լրանալու հաջորդ օրվանից)

- «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ Կառավարության 29.07.2004թ. «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N164-Ն որոշումը ճանաչվել է ուժը կորցրած, և նոր կարգավորումներին համապատասխան՝ սահմանվել են խաղային գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը և լիցենզիաների ձևերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 747-Ն, ընդունված՝ 12.06.2025թ., ուժի մեջ՝ 13.06.2025թ.)

- Գործող կարգավորման համաձայն՝ պատվիրատուն կարող է գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչը հանդիսացող անձից մեկ անձից գնման ձևով (հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով) ձեռք բերել գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունները, այդ թվում՝ սպասարկման համար անհրաժեշտ պարագաները:
- Սակայն գործնականում հանդիպում են դեպքեր, երբ պատվիրատուները ներկայացնում են հիմնավորումներ, որ գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչը հանդիսացող անձից անհրաժեշտ է ձեռք բերել միայն սպասարկման համար անհրաժեշտ պարագաները՝ առանց նույն անձից տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման:
- Որոշմամբ պատվիրատուների համար նախատեսվում է հնարավորություն գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչը հանդիսացող անձից մեկ անձից գնման ձևով ձեռք բերելու:
 1. գնման առարկայի տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ պարագաները՝ առանց նույն անձից տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման,
 2. գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունները՝ առանց նույն անձից այդ ծառայությունների համար անհրաժեշտ պարագաների գնման,
 3. գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունները, այդ թվում՝ սպասարկման համար անհրաժեշտ պարագաները:

«Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք սահմանելու մասին» (N 798-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 02.07.2025թ.)

- Վեցամսյա արգելք է սահմանվել Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0302 91 000 0, 0303 91, 1604 32 001 0 և 0511 91 901 9 ծածկագրերինն դասվող Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող սաղմոնազգիներին պատկանող սիգի ձկնկիթի արտահանման նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N765-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (N 767-Ն, ընդունված՝ 12.06.2025թ., ուժի մեջ՝ 01.07.2025թ.)

- Որոշմամբ սահմանվել է փորձաքննություն իրականացնող անձանց կողմից հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների, ինչպես նաև Կառավարության որոշմամբ սահմանված ռազմական նշանակության արտադրանքի ցանկում ներառված ռազմական նշանակության արտադրանքի փորձաքննության եզրակացության կազմման և պետական եկամուտների կոմիտեին տրամադրման կարգը՝ տրամադրման եղանակը, ժամկետները, ձևաչափը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 807-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 01.09.2025թ.)

- 04.12.2024թ. ՀՕ-491-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածում կատարված փոփոխություններով ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա տվյալներում «ապրանքային դիրքը» բառերը փոխարինվել են «ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» բառերով:
- Սույն փոփոխման արդյունքում N1976-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ՝ «ապրանքային դիրք» բառերը փոխարինելով «ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» բառերով՝ համապատասխանեցնելով Հարկային օրենսգրքի փոփոխություններին:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 1083-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 784-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 30.06.2025թ.)

- «Ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման կարգը հաստատելու մասին» N1083-Ն որոշման 10.1-ին կետը ճանաչվում է ուժը կորցրած և ամբողջ գործընթացն առավել բովանդակային կերպով սահմանվելու է «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժ» ենթակետով սահմանված՝ ռազմական կարիքների համար հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման հայտերի ձևավորման, ֆինանսավորման և կատարման կարգով:

«Ռազմական կարիքների համար հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման հայտերի ձևավորման, ֆինանսավորման և կատարման կարգը հաստատելու մասին» (N 821-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 03.07.2025թ.)

- Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) կանոնակարգման և ֆինանսավորման գործընթացները կանոնակարգված չեն Կառավարության որոշմամբ, դրանք իրականացվում են ազգային ռազմական ստանդարտներում եղած տեղեկատվության, «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում նշված կարգավորումների, առանձին որոշումների հիման վրա, ինչը տարաբնույթ մեկնաբանությունների և թյուրիմացությունների հիմք է հանդիսանում:
- Որոշմամբ կանոնակարգվում են ռազմարդյունաբերության ոլորտում պետական լիազոր մարմնի և ռազմական կամ երկակի նշանակության ապրանք արտադրողների կողմից ԳՀՓԿԱ գործընթացի ձևավորման, ֆինանսավորման և կատարման կարգերը, ինչը հնարավորություն կտա կատարողներին հստակ պատկերացնել ամբողջ գործընթացը, յուրաքանչյուր պետական կառավարման համակարգի դերը, դիմումին և այլ փաստաթղթերին անդրադառնալու հստակ ժամկետները:

«Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության ապրանքի, դրա լրամասերի, բաղադրիչների, փորձանմուշների, հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների պետական փորձարկումների անցկացման կարգը հաստատելու մասին» (N 826-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 04.07.2025թ.)

- Որոշմամբ կանոնակարգվում է ռազմարդյունաբերության ոլորտում պետական լիազոր մարմնի, պետական կառավարման համակարգի շահագրգիռ մարմինների և ռազմական կամ երկակի նշանակության ապրանք արտադրողների կողմից այդ ապրանքների (հատուկ գույք) փորձարկումների գործընթացը:

«Հայաստանի Հանրապետությունից երկաթի և չեգիրված պողպատի, երկաթից կամ չեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով պողպատի, գտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» (N 795-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 02.07.2025թ.)

- Նպատակ ունենալով խթանելու հումքի փոխարեն առավել բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությունն ու արտահանումը՝ Կառավարության մի շարք որոշումներով արգելվել է սև և գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի արտահանումը, ինչը խթան է հանդիսացել տեղում սև և գունավոր մետաղների ջարդոնը վերամշակելու համար:
- Այդ իսկ նպատակով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7206, 7207, 7224, 7403, 7601 և 7603 ծածկագրերին դասվող ապրանքների՝ դեպի երրորդ երկրներ արտահանումը համարվել է լիցենզավորվող գործունեություն, և սահմանվել է այդ ապրանքների պետական տուրքի դրույքաչափ:
- Այս կարգով նախատեսվում է մեկ լիցենզիայի միջոցով տարբեր խմբաքանակներ (առանց յուրաքանչյուր անգամ Լիազոր մարմնին դիմելու) արտահանելու հնարավորություն:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (N 816-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 01.07.2025թ.)

- Որոշմամբ սահմանվում են տնտեսվարող սուբյեկտի կողմից սահմանային թույլատրելի արտանետումների նախագծերի՝ լիազոր մարմին ներկայացման, լիազոր մարմնի կողմից արտանետման թույլտվությունների տրամադրման, ուժը կորցրած ճանաչելու և մերժման գործընթացների՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով իրականացնելու ընթացակարգերը:
- Տրամադրված թույլտվությունը պարունակում է արագ արձագանքման ծածկագիր և 16 նիշանոց հսկիչ համար: Թույլտվության վավերականությունը հնարավոր է ստուգել՝ մուտքագրելով հսկիչ համարը պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգման կայք (<https://verify.e-gov.am/am/>) կամ արագ արձագանքման ծածկագրի միջոցով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (N 814-Ն, ընդունված՝ 20.06.2025թ., ուժի մեջ՝ 01.09.2025թ.)

- Որոշմամբ ծանրաքաշ, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռների փոխադրումների թույլտվությունների տրամադրումն առաջարկվում է իրականացնել բացառապես էլեկտրոնային եղանակով՝ տրանսպորտի թվային ոլորտի ծառայությունների transport.e-gov.am հարթակի միջոցով:
- Թույլտվության տրամադրման գործընթացում բեռնափոխադրողի պարտականությունները սահմանափակվում են անհրաժեշտ տեղակատվությունը Հարթակ մուտքագրելով:
- Թույլտվության տրամադրման համար օրենսդրությամբ սահմանված գործառույթները լիազոր մարմինների կողմից իրականացվում են Հարթակի տիրույթում՝ էլեկտրոնային եղանակով:
- Հարթակում ձևավորվում է թույլտվության էլեկտրոնային տարբերակ, որը պարունակում է արագ արձագանքման ծածկագիր (QR կոդ) և 16 նիշանոց հսկիչ համար (tracking number):
- Բեռնափոխադրման թույլտվության և անցագրի վավերականությունը փոխադրումների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների կողմից կարող է իրականացվել հսկիչ համարը պաշտոնական փաստաթղթերի իսկության ստուգման պաշտոնական կայք (<http://verify.e-gov.am>) մուտքագրելու կամ արագ արձագանքման ծածկագրի միջոցով:

«Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» (N 833-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 05.07.2025թ.)

- Որոշմամբ 6 ամիս ժամկետով արգելք է սահմանվում մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների, այդ թվում՝ ցորեն, մեսլին, գարի, եգիպտացորեն, հնդկացորեն, արևածաղկի սերմ, արևածաղկի ձեթ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0, 1001 99 000 0, 1003 90 000 0, 1005 90 000 0, 1008 10 000, 1206 00 990 0, 1512 11 910, 1512 11 910, 1512 19 900 2, 1512 19 900 9 ծածկագրին դասվող) արտահանման նկատմամբ:
- Որոշմամբ սահմանվող արգելքը չի տարածվելու Հայաստանի Հանրապետություն ներմուծված և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վրա:

«Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» (N 873-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 21.07.2025թ.)

- Կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի N1871-Ն որոշմամբ 6 ամիս ժամկետով սահմանափակումներ են կիրառվել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2523100000, 2523210000) ծածկագրերին դասվող ցեմենտի ներմուծման վրա, մասնավորապես՝ «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացվում է լիցենզիաների հիման վրա:
- Նպատակ ունենալով շարունակական դարձնել պետության կողմից տեղական արտադրությունների զարգացումը խթանող միջոցառումները՝ որոշմամբ շարունակվում է երրորդ երկրներից ներմուծվող ցեմենտի լիցենզավորման գործընթացը, և 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 1871-Ն որոշման գործողության ժամկետն ավարտվելուց հետո՝ սահմանվում է ցեմենտի ներմուծման լիցենզավորման նոր վեցամսյա ժամկետ:

«Հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգն ու չափանիշները սահմանելու մասին» (N 867-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ կապահովվի հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) շարժի ու շրջանառության օրինականությունը, կկանխարգելվի դրանց անօրինական տեղափոխումը և սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը:
- Նախատեսվում է հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիան (եզրակացությունը) տրամադրել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ համապատասխան դասակարգվող հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) համար, որի համար կիրառվում է արտահանման սահմանափակում:
- Կարգավորումը համապատասխանեցված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 125 որոշման պահանջներին:

«Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգը հաստատելու մասին» (N 864-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Ներկայումս մշակութային արժեքներ արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու համար ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվում է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ):
- Նախատեսվում է տարանջատել արտահանում և ժամանակավոր արտահանում ընթացակարգերը և ներկայացված նախագծով սահմանել մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգը:
- Նախատեսվում է լիցենզիան տրամադրել մաքսային ընթացակարգով մշակութային արժեքների ձևակերպման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տրանսպորտով մշակութային արժեքների փոխադրման համար, իսկ եզրակացությունը՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար:
- Որոշման ընդունումը բխում է նաև «Մեկ կանգառ, մեկ պատուհան» Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի հարթակի և պետական կառավարման մարմինների միջև «փոխգործելիության» հարթակի ներդրումից:
- Նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Պետական տուրքի մասին» օրենքում, այդ հանգամանքը հաշվի առնելով՝ նախագծի ուժի մեջ մտնելը նախատեսվում է 2026 թվականի հունվարի 1-ից:

«Հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) ժամանակավոր արտահանման և վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգն ու չափանիշները հաստատելու մասին» (N 870-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նոր ենթաօրենսդրական ակտով կկարգավորվի հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) ժամանակավոր արտահանումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր արտահանման կամ վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման համար եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տրամադրելու կարգը:

«Հայաստանի Հանրապետությունում կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակների դասակարգման համակարգը (տաքսոնոմիան) հաստատելու մասին» (N 852-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 27.06.2025թ.)

- Սահմանվում են կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակները, առաջնահերթ ուղղություններն ու ենթաուղղությունները, ինչպես նաև դրանց տեխնիկական համապատասխանության չափանիշները:
- Վերոնշյալի ապահովման հիմնական գործիքակազմն ընդգրկում է օրենսդրական և իրավակարգավորող դաշտի բարելավմանն ուղղված նախաձեռնություններ, նախագծի հիմնական շահառու հանդիսացող կողմերի իրազեկվածության բարձրացում, համագործակցություն ոլորտի միջազգային գործընկեր կառույցների հետ, ինչպես նաև կանաչ ենթակառուցվածքներում ներդրումների խրախուսում:
- Տաքսոնոմիայի շահառուների հիմնական շրջանակը ներառում, սակայն չի սահմանափակվում պետական կառավարման համակարգի մարմիններով, միջազգային ֆինանսական հաստատություններով և մասնավոր հատվածի ներկայացուցիչներով, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպություններով, ձեռնարկություններով, տնային և ֆերմերային տնտեսություններով:
- Տաքսոնոմիայի շրջանակի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2026 թվականի 2-րդ եռամսյակ նախատեսվում է մշակել.
 1. տաքսոնոմիայով նախատեսված ուղղություններին, ենթաուղղություններին և ծրագրերին ու միջոցառումներին առնչվող գործող նորմատիվ իրավական ակտերում, ըստ անհրաժեշտության, համապատասխան լրացումների և (կամ) փոփոխությունների նախագծերի փաթեթ և հաշվետվողականության մեխանիզմ,
 2. կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի ու միջոցառումների տեսակների վերիֆիկացման իրականացման, վերիֆիկատորներին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանող ընթացակարգ,
 3. ըստ անհրաժեշտության՝ համապատասխան ոլորտային ուղեցույցներ, տեխնիկական համապատասխանության չափանիշներ և ստանդարտներ:

«Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեից ֆինանսավորվող մարմինների կողմից աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակում էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի ծառայություններից օգտվելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» (N 853-Ն, ընդունված՝ 26.06.2025թ., ուժի մեջ՝ 28.06.2025թ.)

- Որոշմամբ սահմանվել է, որ պետական բյուջեից ֆինանսավորվող մարմինների աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակում ՀՀ տարածքում մարմինները կարող են օգտվել էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի (հարթակների) ծառայություններից, պետական բյուջեի՝ այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին:
- Ծառայությունների պայմանները սահմանվում են համապատասխան մարմնի և հարթակների միջև կնքված պայմանագրով՝ համաձայն գործող օրենսդրության:
- Ծառայությունից օգտվելու պայմանների վերաբերյալ կարգը, ինչպես նաև ծառայությունից օգտվելու իրավունք ունեցող մարմնի աշխատողների ցանկը հաստատվում և փոփոխվում է մարմնի գլխավոր քարտուղարի կամ աշխատակազմի ղեկավարի կամ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պաշտոնատար անձի անհատական իրավական ակտով:
- Ծառայությունների համար վճարումները կատարվում են՝ համաձայն տվյալ պահին գործող սակագների:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԱՏՈՐԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԸ
17.06.2025թ. ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ:**

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Գործող կարգավորումների նախատեսված՝ ավտոմատացված տրամադրելու նպատակով շահագործված և օտարվող մեքենաների մասով նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները վերահաշվարկելու պահանջը չի բխում նշյալ պահանջը սահմանելու առումով ի սկզբանե հետապնդվող նպատակադրումներից և էականորեն խոչընդոտում է նշյալ գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը՝ վերջիններիս համար առաջացնելով լրացուցիչ ֆինանսական ծախսեր:
- Լիզինգի պայմանագրի շրջանակներում լիզինգատուի կողմից ձեռք բերված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցներն այնուհետև լիզինգառուին օտարվում են առանց վերադիրի, ինչով պայմանավորված՝ տեղին չէ այդ տրանսպորտային միջոցների օտարումից եկամտի որոշման առանձնահատուկ կարգավորումները լիզինգի (տարատեսակների) պայմանագրով օտարվող ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցների նկատմամբ նույնպես կիրառելը:
- Նախագծով ակնկալվում է բարելավել տրանսպորտային միջոցները վարձույթով և լիզինգով տրամադրելու գործունեության հարկային միջավայրը:

Բնակչության պետական ռեգիստրի մասին օրենք; այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Բնակչության ռեգիստրի մասին» նոր օրենքի նախագծի ընդունումը նպատակադրված է մեկ միասնական տեղեկատվական համակարգում մեկտեղելու բնակչության ռեգիստրում ներառման ենթակա տվյալները:
- Պետական մյուս մարմիններն իրենց գործառնությունների իրականացման համար կօգտվեն բնակչության ռեգիստրից:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին; «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է հանել ոստիկանությունում ծառայության անցնելու տարիքային վերին շեմը:
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միասնական կրթահամալիրի ձևավորման համատեքստում նախատեսվել է, որ շարունակական կրթության տրամաբանության մեջ համայնքային ոստիկանների պատրաստումն իրականացվելու է միջին մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, որի մուտքային պահանջ է լինելու արհեստագործական ոստիկանական կրթություն ստանալուց հետո մեկ տարվա ծառայության ստաժը:
- Հաշվի առնելով նշված գործընթացի տևականությունը՝ քրեական ոստիկանության օրինակով համայնքային ոստիկանությունն առավել թիրախային կրթական ծրագրի շրջանավարտներով օպերատիվ կերպով համալրելու համար անհրաժեշտություն է առաջացել մշակելու և իրականացնելու համայնքային ոստիկանի որակավորման մեկնագամյա արհեստագործական կրթական ծրագիր, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիները և ոստիկանության գործող ծառայողները:
- Բացի այդ, գործող օրենքով սահմանված է, որ ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան պաշտոնի նշանակվելուց վեց ամիս անց: Նախագծով նախատեսվում է փոփոխել «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ժամկետը՝ հնարավորություն տալով ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողին ատեստավորվել նշանակումից երկու ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունման նպատակն է ապահովել նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի աշխատանքի ամբողջականությունը, բարձրացնել հսկողական միջոցառումների արդյունավետությունը և նպաստել հարկային իրավախախտումների բացահայտման գործընթացին:
- Նախագծով առաջարկվում է՝
 1. օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ թեմատիկ հարկային ստուգման հարցերի ցանկում «արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգի ու կանոնների պահպանման ճշտությունը» ձևակերպումը փոխարինել «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման ճշտության ստուգում» ձևակերպմամբ,
 2. օրենսգրքի 419-րդ հոդվածում կիրառվող հսկիչ գնման ուսումնասիրության հետ կապված կարգավորումները համապատասխանեցնել օրենսգրքի կարգավորումներին՝ նախատեսելով դրանք որպես թեմատիկ ստուգման դրույթներ,
 3. սահմանել, որ ՀԴՄ կիրառող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում պարտավոր են ՀԴՄ-ի միջոցով կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով ապահովել այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան՝ այդ նույնականացման միջոցները սկանավորելու և ՀԴՄ կտրոն տպագրելու միջոցով,
 4. սահմանել, որ Կառավարության սահմանած դեպքերում և կարգով՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան իրականացվում է էլեկտրոնային եղանակով,
 5. սահմանել պատասխանատվություն՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվություն հարկային մարմնի միասնական շտեմարան չփոխանցելու կամ փաստացի փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին; Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին; «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի ընդունումը պայմանավորված է վարորդական վկայականի ստացման թվայնացման գործընթացի լավարկման անհրաժեշտությամբ:
- Նախագծերի փաթեթով առաջարկվում է հնարավորություն տալ ՀՀ տարածքում երթևեկել առանց հաշվառման վկայագրի և վարորդական վկայականի ֆիզիկական առկայության, եթե այդ փաստաթղթերը հատկացվել են ՀՀ իրավասու մարմինների կողմից:
- Նախագիծը չի բացառի ֆիզիկապես հաշվառման վկայագիր և վարորդական վկայական ունենալու հնարավորությունը, սակայն կապահովվի դիմողի ցանկությամբ դրանց թվային տարբերակը հատկացնելու հնարավորություն:
- Նախագծով առաջարկվում է նաև սահմանել պետական տուրք վարորդական վկայականների և հաշվառման վկայագրերի թվային տարբերակի հատկացման համար՝ դրանց ֆիզիկական տարբերակի հատկացման համար նախատեսված չափով:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է լրացում կատարել «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածում՝ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7214 և 7215 ապրանքային խմբերին դասվող՝ երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիայի տրամադրման համար սահմանելով պետական տուրք՝ բազային տուրքի 29-ապատիկի չափով: Միաժամանակ, վերոնշյալ օրենքի 38-րդ հոդվածում փոփոխություն կատարելով՝ նախատեսվում է ամրագրել նախատեսված պետական տուրքը վերադարձման ենթակա չլինելու դրույթ՝ անկախ ներկրման գործընթացի փաստացի արդյունքներից:
- Նախագծի նպատակն է ապահովել ոլորտային արտադրատեսակների շուկայում հավասար մրցակցությունը, արտադրական ավելի երկար շրթանների կիրարկումը, առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության զարգացման խթանումը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին; այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Ներկայիս խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի դիսպոզիցիան չի նախատեսում պատասխանատվություն տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու համար: Ավելին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն, սակայն նախատեսված չեն արարքը կրկին կամ մեկից ավելի անգամ կատարելու դեպքում համարժեք պատասխանատվության միջոցներ:
- Նախագծով առաջարկվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն արարքի կատարումը նախատեսել որպես հանցագործություն:
- Նախագծերի փաթեթով նախատեսվում է նաև արգելել արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող և արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաների, սարքերի կամ գործիքների վաճառքը 18 տարին չլրացած անձանց, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է վարչական պատասխանատվություն նախատեսել համապատասխան սուբյեկտների կողմից 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող և արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ վաճառելու, ինչպես նաև՝ դրանց վաճառքին ներգրավելու համար:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենքի նախագծի համաձայն նախատեսվում է ավելացնել պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին տրվող հիմնական արձակուրդի ժամկետները և նրանց համար լրացուցիչ արձակուրդ սահմանել զինվորական երդում ընդունելու կապակցությամբ:
- Ռազմաուսումնական հաստատություն ավարտած և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կամ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնների նշանակված սպաների համար գործող ծառայողական բնակարաններով ապահովման համակարգը փոխարինվում է իրենց կարիքներին համահունչ պետական բյուջեի միջոցների հաշվին հիփոթեքային վարկավորմամբ սեփականության իրավունքով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու իրավունքով, սահմանվում են գործընթացի իրականացման հետ կապված պայմանները:

«Ծանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին; Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենքների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ լրացուցիչ ուժեղացուցիչներից և բարձրախոսներից հնչող բարձր երաժշտությունը, վերասարքավորված կամ լրացուցիչ տեղադրված խլացուցիչների ձայները կարող են խախտել հասարակական անդորրը, ինչպես նաև դժվարացնել չշակների ձայնը լսելը, արձագանքել արտակարգ տրանսպորտային միջոցների ազդանշաններին և երթևեկելը:
- Առաջարկվում է արգելել տրանսպորտային միջոցներում տեղադրել լրացուցիչ ուժեղացուցիչներ և բարձրախոսներ, ինչպես նաև արգելել տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչների տեղադրումը:
- Միաժամանակ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանվելու է վարչական պատասխանատվություն՝ պահանջները խախտելու համար:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին; այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխությունների նպատակն է համահունչ դարձնել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը ՖԱԹՖ-ի վերանայված չափորոշիչներին:
- Հաշվետու անձանց ցանկից կհեռացվեն արվեստի գործերի դիլերները, սակարկությունների կազմակերպիչները և անհատ աուդիտորները:
- Կհստակեցվեն «վերահսկող մարմին» և «իրական շահառու» հասկացությունները:
- Կվերանայվի տրաստի հասկացությունը՝ հիմնվելով Հաագայի կոնվենցիայի վրա:
- Բոլոր իրավաբանական անձանց վրա կտարածվի ռիսկերի գնահատման ընթացակարգեր և ներքին ակտեր ներդնելու պարտականությունը:
- Կուժեղացվեն հաճախորդի ուսումնասիրման, փաստաթղթավորման և վերահսկողության մեխանիզմները:
- Կբարձրացվի թափանցիկությունը ֆինանսական խմբերի կառավարման կառուցվածքներում:
- Կխստացվեն միջոցառումները՝ ուղղված ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի ֆինանսավորման դեմ:

«Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը մասնավորապես պայմանավորված է պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման լիազորող նորմ սահմանելով:
- Նախատեսվում է ընթացքի մեջ դնել «Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների գործածության կանոնարկման կարգը» նախագծի, կանոնարկման նպատակով ձևավորված հանձնաժողովի կազմի ու աշխատակարգի ընդունումը և լիարժեք դարձնել լեզվի ստանդարտացման գործընթացը ՀՀ պետական ու հանրային կյանքում:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին; Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենքների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ԵԱՏՄ անդամ պետություններից մեկի տարածքում գրանցված փոխադրողների կողմից Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության տարածքում գտնվող կետերի միջև բեռների ավտոմոբիլային փոխադրումների իրականացման փուլային ազատականացման՝ 2016-ից մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածի համար ծրագրի կատարման ապահովմամբ:
- Փաստացի ներկայումս Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն լիարժեք կանոնակարգված չէ Միության կաբոտաժային փոխադրումների ազատականացման ծրագիրը:
- Ծրագրի նպատակը Միության շրջանակներում ավտոտրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ձևավորումն ու Միության անդամ պետությունների փոխադրողների համար Միության ամբողջ տարածքում, քաղաքացիությունից և գրանցման պետությունից անկախ, ավտոմոբիլային տրանսպորտի ծառայությունների հասանելիության դյուրինացումն է:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Համաձայնագրում առավել հստակ ձևակերպված են Ռուս-հայկական համալսարանի կառավարման սկզբունքային մոտեցումները, կրթական ծրագրերի իրականացման հավասար մոտեցման սկզբունքը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ կրթական և գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

«Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Երկրի ներսում տարածքների միջև տրանսպորտային կապը մեծացնելու, հարաբերական տրանսպորտային մեկուսացումից դուրս գալու և երկրի տարանցիկ ներուժն իրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը որոշել է իրականացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման ազգային լայնածավալ ծրագիրը
- Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ճանապարհի կառուցումը կապահովի Հայաստանի հարավային սահմանից դյուրին երթևեկը մինչև Վրաստանի սահման, ապա նաև՝ դեպի սևծովյան նավահանգիստներ, թույլ կտա իրականացնել եվրոպական չափանիշներին համապատասխանող բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ, զարգացման լուրջ հնարավորություններ կընձեռի Հայաստանի հարավից հյուսիս ընկած բոլոր բնակավայրերին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
